

1796), յետոյ Միխիթարեանց գործերը, ազգային հրատարակութեանց ճոխ հաւաքածոն, և դարձեալ մեծապէս հետաքրքրական և հազուագիւտ անդրանիկ նշմարները Հայ տպագրութեան Վենետիկ մէջ լոյս տեսած 1512ին:

Յետոյ դարձեալ հայկական նկարներ Գ. Բաշինջաղեանի և Յ. Տամատի: Յատուկ սրահի մը երկայնքին երկու կողմ Հայ վերածնունդի ռահվիրաները՝ Միխիթարեան վաստակաւոր զէմքերուն նկարները, սկսեալ Ասկերեանէ մինչեւ Չամչեան, Աւետիքեան, Ինճիճեան, Աւգերեաններ, Զախճախեան, Բժշկեան, Սարգիսեաններ, Բագրատունի, Ալիշան, Քաջունի եւն եւն: Առաջնորդ հայրը շարունակելով ընթացքը յանկարծ կանգ կ'առնէ կեդրոնը պարզ ու վսեմ դրան մը առջեւ ու յարգանքով մը մատնանշելով կ'ըսէ. «Միխիթար Աբրահօր սենեակը՝ ուր կը բնակի իր յաջորդը»։ Նոյնքան յարգանքով համակուած մեծ մարդուն և իր գործին ու Տան տեսիլներով, կը շարունակեն Արիններն իրենց այցը՝ ճեմարանին մէջ դադար առնելով և պահ մը աչքէ անցնելով Մայր հայրենիքի և գաղթաշխարհի թերթերն ու լրագիրները. Հայ Մամուլի համայնապատկերը: Ինչքան հպարտութեամբ ու միխիթարութեամբ կը լեցուի մարդու սիրտը այդ տեսիլքին առջեւ որ հայուն կենսունակութեան ու անմահութեան գրաւականն է:

Կը շարունակեն յառաջ. դարձեալ սրահ, դարձեալ նկար, դարձեալ հնութիւն, և դարձեալ յուզում և յիշատակ՝ երբ կ'անցնին առջեւէն սենեկին՝ ուր բնակած է Ալիշան աւելի քան 25 տարիներ և հոն յղացած ու երկնած իր հսկայ Տեղագրութիւնները, վերջապէս բնագիտական թանգարան մը, մարդակազմութիւն, կենդանաբանութիւն և հանքաբանութիւն — բրածոներ հին, զանազան հազուագիւտ նմոշներով: Անդին ֆիզիքայի մեքենաներ բազմազան՝ ելեկտրական գիւտերու շարքով ուր կը ճառագայթէ «Միխիթար՝ Փառք Հայաստանեայց»։ Դահլիճը

դրուագուած է շուրջանակի՝ աշխարհի երեւելիներու կիսանդրի մետալոներով, առաստաղին վրայ Հաւատք, Գիտութիւն և Գեղարուեստ ներդաշնակօրէն կը ներշնչեն: Ազնիւ հիւրերը լայն պատշգամբ մը կը դիտեն Վենետիկ զմայլելի հեռապատկերը երկնքի և ջուրերու յատակութեան մէջ:

Կ'իջնեն Տպարան, որքան յիշատակներ հոս ալ. որքան գահունակութիւն հայ գրի, հայ տպագրութեան յաղթանակներով:

Վերջապէս կ'առաջնորդուին հիւրերու յատկացուած սրահ մը. նկարներու հոծ բազմութեան մէջ հետաքրքրութիւն կը շարժեն մեծ արուեստագէտ Է. Շահինի գործերը, Խաչատուրեանէն տեսարաններ, Աւետիսեանէն դիմանկարներ և դեռ ուրիշ նկարներ, սրբազան արծաթեղէն ու հանդերձեղէն հայ հնութիւններ՝ Իսպէնեանի կողմէն վանքին նուիրուած: Այնտեղ Հայրերուն կողմէն կը պատուասիրուին Հայ Արինները Վանքին համեղաճաշակ պտուղներով և պատուական զինով. տեղի կ'ունենան շնորհաւորութիւններ ու մաղթանքներ՝ բարօրութեան ու երջանկութեան Հայ Ազգին և Միխիթարեան Միաբանութեան:

Վերջին պահուն պտոյտ մը կ'ընեն վանքի շուրջը, կանգ առնելով յարգալիւր վանքի գերեզմանատան մէջ անմահներու շիրմներուն առջեւ, որոնց մէջ ցոյց կը տրուի յատկապէս Ալիշանին: Յիշատակի համար խմբանկար մը կը քաշուին ու կը շարունակեն ճամբան. նաւամատոյցին ըզմն են. վանքին քարտեր և յիշատակներ ստորագրութիւններով հետերնին կը



տանին հայրենիքի մը սիրով, կրկին խմբանկարներ առաջնորդ Վարդապետներուն հետ, և կարօտ ու հայեացք վանքին վրայ սեւեռուն՝ կը մեկնին ժամը մէկին դէպ ի Վենետիկ տանելով հեռաւոր հայ գաղութին վանական Հայրերու սիրալիւր ողջոյններն ու բարեմաղթութիւնները:

Նոյն իրիկունն և յաջորդ առաւօտ ըն-

կերութիւնը կը վայելէն Փարիզի և Աղեքսանդրիոյ Սաներուն՝ որոնց հետ նաեւ կարեւոր այցելութիւն մը, ինչպէս պիտի տեսնենք յաջորդ էջերու մէջ:

Ս. Ղազարու և Վենետիկ թանկագին յիշատակներով և հոգեկան խոր տպաւորութիւններով մեկնեցան անոնք միջօրէին դէպի Հռոմ — Նափոլի — Եգիպտոս:

ԽՄԲ.

ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ ՄԻԽԹԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՍԱՆԵՐ ԴԷՊԻ ՀՌՈՄ-ՎԵՆԵՏԻԿ

Տարիներէ ի վեր Սեւրի Մուրատեան վարժարանի մեր վաստակաւոր Հայրերը ամառնային արձակուրդին Վենետիկ ընելու առիթով՝ հետերնին հոս կը բերեն միշտ խումբ մը սաներու, ինչպէս և այս տարի, զոհողութիւնն յանձն առած հսկելու և խնամարկելու անոնց այդ երկամսեայ շրջանին, որպէս զի անոնք կարենան օգտուիլ ամէն կերպով գեղեցիկ Իտալիայէն ու մանաւանդ Վենետիկէն և անոր ծոցին մէջ Հայ ազգի վերածնութեան Միխիթարակերտ սրբավայրէն:

Այս տարի նոյն բախտին կ'արժանանային նաեւ Աղեքսանդրիոյ մեր Միխիթարեան Վարժարանի խումբ մը սաներ՝ թողորովին բացառիկ պարագայով մը, Իտալական պետութեան ծախքով շնորհիւ Մուսսոլինիի բարձրագոյն հրամանի մը, որով հայասէր առաջնորդը հաճած էր Աղեքսանդրիոյ մեր վարժարանի անխոնջ ղեկավարիոյ մեր վարժարանի վ. Չրաւ և անձնուէր տեսչին՝ Հ. Քերոբէ վ. Զրաւեանի դիմումին վրայ՝ թոյլ տալ որ Եգիպտոսեակ Իտալացի պալիստերու խումբին հետ՝ տասնեակ մ'ալ մեր սաներէն վայելէին Իտալիա այցելելու շնորհքը:

Մեր սաներու խմբապետն էր վարժարանի ազնիւ և անձնուէր ուսուցիչներէն՝ Պրն. Վարդ Ճըւլտերեան, որ հօր մը հոգածութեամբ կը հսկէր անոնց վրայ:

Աղեքսանդրիա — Փոր Սայիտ — Նափոլի գծով հասած էին Իտալիա և իսկոյն Հռոմ

մեկնած՝ Monte Sacro արուարձանի դաշտերուն մէջ վրան զարնելով 60,000 պալիւաներու և յառաջապահներու հետ՝ որ ամէն աշխարհէ եկած էին՝ «Campo Mussolini» ճամբարին մէջ, օրերնին մարզանքով, պտոյտով և յաւիտենական քաղաքի հին ու նոր փառահեղ յուշարձաններն այցելելով:

Այդ հազարաւորներուն մէջ մեր 10 հայերը «Միխիթարեան» անուան շնորհիւ մեծ սէր և հոգածութիւն կը վայելէին:

Կրկին բացառիկ շնորհք մ'եղաւ անոնց՝ պատկան Նախարարութեան թոյլտուութեամբ՝ Վենետիկ այցելութիւնը:

Օգոստոս 26ին երեկոյեան դէմ վանքիս քանի մը Հայրեր և Մուրատեան Վարժարանի աշակերտները Վենետիկ կայաւորանին մէջ կ'ընդունէին զիրենք՝ առաջնորդելով Մուրատ — Ռափայէլեան Վարժարանի շքեղ պալատը:

Ընթրիքէն վերջ գիշերային լոյսերով ողողուած հրապարակին վրայ՝ Ս. Մարկոսի տաճարին յանդիման որ տեսիլքէ մը աւելի չքնաղ էր՝ ունկնդրեցին քաղաքային նուագախումբի սքանչելի եղանակները ու լուսակարկաչ ջրանցքներու մոգական տրպաւորութիւններով դարձան վարժարան:

Յաջորդ օրը պաշտօնական այցելութիւն մը տուին ընկերակցութեամբ Մուրատեան Վարժարանի Սաներուն և Եգիպտոսեակ Արիններուն՝ Պալիւաներու գաւա-

ռային նախագահ Մելնիի. Միաբանութեանս ընդհ. Ատենադպիր Հ. Եղիա Վ. Փէ-
չիկեան յարգանքի և երախտագիտութեան
տաք ուղերձ մ'ըրաւ Նախագահին՝ յանուն
Միաբանութեան, յանուն մեր վարժարան-
ներու Սաներուն և Հայ Արիներուն, շնորհա-
կալ ըլլալով իտալական Պետութեան, անոր
Առաջնորդին և Վենետիոյ՝ այդ ազնուա-
մեծար ասպնջականութեան համար: Որուն
պատասխանեց ազնիւ Նախագահը՝ նոյն-
քան ջերմ խօսքերով, շեշտելով իտալիոյ
և անոր Առաջնորդին բարեացակամ զգա-
ցումները և ճիգերը բարձրացնելու իր ազգը
և նպաստելու իր քաղաքակրթութեամբ
բոլոր անոնց՝ որ հին ու նոր Հոռմի բա-
րեկամ են և իրենց ազգին ազատութեան
և մեծութեան կը ձգտին:

Ազնիւ բարեկամը գլուխ անցած մեր
հայորդիներուն՝ ցոյց տուաւ Վենետիկեան
երիտասարդութեան կրթական — մարզա-
կան հաստատութիւնները, հուսկ անձամբ
հիւրասիրելով ամենուն օշարակ և անու-
շեղէններ: Ազնիւ Նախագահին անկեղծ
խօսքերն և սիրալիր հիւրասիրութիւնը խոր
տպաւորութիւն թողուցին բոլորին վրան:

Ճաշէն վերջ առաջնորդութեամբ իրենց
Տեսչին՝ Հ. Քերորէ Վ. Զրաքեանի՝ անոնք

այցելեցին Ս. Ղազարը. ու Մխիթար Աբ-
բահօր շիրմին վրայ՝ որ իրենց կրկնապէս
Հայր և Լուսանորդ կը ներկայանար՝
ծնրադիր կատարեցին իրենց սրտին ուխտը,
որ ուխտն է ամէն հայու, լոյս և ազա-
տութիւն հայցելով ամբողջ Հայ ազգին:

Յետոյ մանրամասն այցելեցին վանքին
ամէն անկիւն, ամէն յիշատակարան ա-
մենամեծ հետաքրքրութեամբ, հայ հնու-
թեան սրբազան յիշատակներէն մինչեւ
իրենց բնակավայրէն եկած ու Ս. Ղազա-
րու մէջ ննջող երեքհազարամեայ մոռնիս:

Յաջորդ օրը ճաշի էին Ս. Ղազար. և
հետեւեալ առաւօտն ալ կ'այցելէին դէպ ի
ցամաք երկիր Վանքի և Մուրատ-Ռափի.
Վրժինի ամարանոցները, գեղեցիկ բնու-
թեան մէջ, առարկայ դառնալով մերՀայ-
րերուն և Աշակերտութեան գուրգուրանքին:

Վերադարձին՝ ինչպէս նաեւ կանխաւ
բախտն ունեցան այցելելու չքնաղ քաղաքին
պատմական յուշարձանները՝ Ս. Մարկոս,
Դուքսերու պալատը, Պատկերներու թան-
գարանները, ամէնուրեք յարգանք և դիւ-
րութիւններ գտնելով:

Մեկնելէ առաջ՝ Վանքի վարդապետնե-
րու, Նախկին սաներու և Հայ բարեկամ-
նիրու ընկերակցութեամբ և առաջնորդու-



Եգիպտացի Արիներ ու փարիզի և Աղեքսանդրիոյ Մխիթարեան վարժարաններու աշակերտներ
27 - Օգոստոս 1937 Մուրատ-Ռափայէլեան վարժարանի բուրաստանին մէջ:

թեամբ իրենց Տեսուչ Հօր՝ յարգանքի
ցոյց մ'ըրին ծաղկեպսակ նուիրելով ան-
կեաներու յուշարձանին. և Տեսուչ Հայրը
երախտագիտական ջերմ զգացումներ յայտ-
նեց գաւառական փոխ-քարտուղարին, փո-
խարէն այնքան դիւրութեանց և շնորհ-
ներու զոր ընծայած էին իրենց՝ Առաջնորդն
և բոլոր պատկան իշխանութիւնները:

Փոխ. քարտուղարն ալ իր կողմէն սի-
րալիր խօսքեր ըսաւ, քաջալերելով զա-
նոնք ներշնչուելու վերածնող իտալիայէն,

գնահատելու Մխիթարեան Հայրերու կըր-
թական և ազգային բարձր առաքելութիւնը
և ազնիւ և քաջ գաւառներ դառնալու Հայ
Ազգին՝ որ պիտի վերածնի իր կարգին նոր
կորովով և նոր փառքերով:

Սեպտ. 1ին մեր սաները կը վերադառ-
նային Հոռմ՝ միանալով Պալիւսներու բա-
նակին և քանի մ'օր վերջ անկից կը մեկ-
նէին Աղեքսանդրիա, անմոռաց յուշերով
և կարօտով անգամ մ'ալ տեսնելու գեղե-
ցիկ իտալիան, Վենետիկն ու Ս. Ղազարը:

ԽՄԲ.

ՌՈՒԲԷՆ ՄԱՄՈՒԼԵԱՆ Ս. ՂԱԶԱՐՈՒ ՄԷՋ

Տարւոյս Սեպտ. 27ին, միջօրէն վերջ, իսկա-
պէս անակնկալ մ'ըրաւ մեզի շարժապատկերի
բեմադիր միջազգային մէծ արուեստագէտի համ-
բաւի տէր մեր այս սիրելի Հայրենակիցը:

Շոգեմակոյկէն ոտքը ցամաք դրած երիտա-
սարգ մը նշմարած էինք. երբ մօտեցած կը
հարցնէինք իր ինքնութիւնը. «Ռուբէն Մա-
մուլեան», կը պատասխանէր պարզութեամբ:
Երբ ըսինք թէ բախտաւոր ենք իրեն պէս պա-
տուաբեր և համբաւաւոր ազգակցի մը այցե-
լութիւնն ընդունելու. ինք մերժեց. «Պատին
իմա է» ըսաւ. ու աւելցուց թէ շատ բան լսած
էր Մխիթարեանց ու իրենց շնաշխարհիկ Ս.
Ղազարի մասին. նոյն իսկ վերջին պահուն երբ
Վենետիկ մէջ Ս. Ղազար էր հարցուցած՝ հիւ-
սած էին իրեն շատ գովեստներ ամէն տեսա-
կետով. և ինք կու գար ուխտաւորի մը հայրենի
վառ կարօտով:

Առաջին վայրէնքն իսկ զինքը շրջապատե-
ցին վարդապետներ ու հոն ներկայ Մուրատեան
վարժարանի Սաները. ծանօթացանք, և մանա-
ւանդ ուրախ եղաւ իրեն քաղաքակից Թիֆլի-
զեցի վարդապետ ալ գտնելով և խօսակցելով
քաղցրաւոր ռուսերէնով մը:

Իր կարողութեան և համբաւի բարձրութեան
չափ պարզ ու խոնարհամիտ էր. և որքան որ
շիկնումով և ցաւով ինքզինքը շատ տկար կը
յայտարարէր հայրենի մէջ, սակայն շատ ախոր-
ժեւէ էր իր խօսակցութիւնը արեւելահայ բար-
բաւով, հոգեբանի իր անոյշ և խոր նայութեան
կապէս այնքան հմայուեցաւ մեր ութամեայ

ծերունի բայց առողջ և զուարթաբաւ Հայրե-
րու կերպարանքներէն, որոնք կարծես պահ մը
երիտասարդացած էին. և Մամուլեան խմբով
ու առանձին զանոնք կը լուսանկարէր թէ
ու առաքելութեան կրկնութեամբ և է իբրեւ-
լաւագոյն յիշատակներ վանքի տեսարաններուն

հետ իր սիրելի ծնողաց տանելու, ինչպէս կ'ը-
սէր միշտ:

Միջավայրին հայկական նուիրակներով
զինք ոգեւորէր էր. առաջնորդութեամբ քանի
մը Հայրերու մեծ հետաքրքրութեամբ կ'այցե-
ւէր վանքի բոլոր կողմերը, կանգ առնելով սի-
րով կարօտով հայկական յիշատակներուն մօտ.
Հայ ձեռագիրներու թանկագին նմոշները՝ ար-
ուեստի և գոյներու այնքան հարուստ ներ-
դաշնակութեամբ, յետոյ դրամներ, գահնամակ,
հրշնակութեամբ, յետոյ գործերը, Տպա-
րը, Այլազովսիի և Շահինի գործերը, Տպա-
րը, Մամուլեան ուշի ուշով կը հետեւէր
Պրն. Մամուլեան լուսնի վանքի ազգային
տրուած բացատրութիւններուն վանքի ազգային
հնութեանց և Հայ մշակոյթի մասին. ու ինք
պարզօրէն կ'արտայայտուէր թէ «Շատ բան լը-
սած էի Ս. Ղազարու և Մխիթարեանց մասին,
սա՛ծ էի Ս. Ղազարու և Մխիթարեանց մասին,
սա՛ծ էի Ս. Ղազարու և Մխիթարեանց մասին»:

Տեղեկութիւններ հարցուց վանքի կազմին,
ներքին և արտաքին կեանքին, գրական — կրթա-
կան — առաքելական գործունէութեան և բար-
ձրագոյն իշխանութեանց հետ Միաբանութեան
ոչնեցած յարաբերութիւններու մասին:

Շուրջ երեք ժամ տեւեց այցելութիւնը և
գեռ. քեզ կը թուէր իրեն. բազմաթիւ լուսա-
նկար յուշեր հետն առած՝ մեկնեցաւ շնորհակա-
լու խոստովանով յաջորդ օրը դառնալու և սե-
ղանակից ըլլալու մեզի:

Ու դարձաւ կրկին խոստովանելով պարզու-
թեամբ թէ այն գիշեր գրեթէ անքուն ան-



*Մարտինոս Կարապետյան
 27 4/44
 Հ. Կարապետյան*

ՌՈՒԲԵՆ ՄԱՄՈՒԼԵԱՆ
 Արուեստագէտը աշխատանքի վրայ



ցուցած էր՝ հոգեկան խոր ապաւորութեան և յուզումին համար զոր ունեցած էր վանքի այ-
 ցելութենէն:
 Երկար խօսեցաւ Վեր. Հայրերուն հետ, ու երբ
 իր յարգանքն և շնորհակալութիւնը կը մատու-
 ցանէր Գերպ. Աբբա՛օր այնքան մտերիմ և
 սիրալիր ընդունելութեան համար, կը խնդրէր
 որ իրեն թոյլ տրուէր՝ առաջիկայ տարիներուն
 դալ և գէթ ամիս մը վանքի անդորրութեան
 մէջ ապրիլ Ս. Ղազարու՝ որ զինք հմայած էր:
 Գաղափարն յայտնեց վանքն ու վանական կեան-
 քը շարժապատկերի առնել՝ եթէ պարագաները
 ներէին: Սիրով յիշատակ թողուց իր լուսա-
 կարները՝ որոնց մէկին վրայ կը նշմարուի նշա-
 նակալից խօսքը զոր դրոշմեց:
 Վառքէս արուած յիշատակներու կարգին իւրն-
 էրեց գծել հայկական խաչ մը ու ներքեւ վանքի
 վարդապետներու անունները, որոնց վերեւ գրե-
 ուած՝

Ծագէ՛ Հայ հանճար – Փայլէ՛ բիւր բոցեր
 Իմանան ազգեր – Թէ Հայք չեն անցեր:

Աւելանեան տողերը չափազանց հաճելի եղան
 իրեն:
 Ու մեկնեցաւ կարծես առանց բաժնուիլ ու-
 ղելու վանքէն. և ընկերակցութեամբ «Բազմա-
 վեպ»ի Խմբագրին, և մեր Նախկին Սաներուն՝
 երաժշտագէտ Գ. Ալեմշահի և Հրաչ Քաջարեն-
 ցի, այցելեց յատկապէս Մուրատ-Ռաֆ. վար-
 ժարանը մեծ գոհունակութեամբ, ու յետոյ
 Վենետիկ ուղիւ վայրեր, արտայայտուելով իր
 արուեստի կեանքին և զարգացման մասին, հո-
 գեկան անդորրութիւն մը վայելելով իբր անձա-
 նօթ մը այս քաղաքին մէջ, առանց պատիւներու
 և խմբագիրներու հարցապնդումներուն:
 Հրաժեշտի պահուն երախտագէտ զգացումով
 խոստացաւ զրկել ապա իր ապաւորութիւնները
 և խմբանկար յուշերը Ս. Ղազարու այցելու-
 թեան, մեր վրայ խոր ապաւորութիւն թողած
 այն տաք սիրով զոր ունէր հանգէպ Հայ Ազգին
 և Հայ Մշակոյթին և իր ընտանեաց, որ կրնայ
 շատ մը օտարամոլներու դաս և ուղղութիւն
 ԸԼԼԼԼ:

ԽՍՐ.